Տ. Զավեն աբեղա Յազիչյան

Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

25.02.15

«Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց. ինչպես Ես ձեզ սիրեցի, դուք էլ միմյանց սիրեցեք»: (Հովհ. ԺԳ 34-35)

Ահա այս պատվիրանն էր «լրումն օրինաց եւ մարգարեից», որ Մեր Տեր Հիսուս Քրիստոս Իր կյանքով բերեց աշխարհ, մի նոր պատվիրան, որով էլ մարդկանց հետ սկզբունքային նոր հարաբերության հիմք դրեց:

Իսկ ի՞նչ է սերը: «Սերն ակտիվ հետաքրքրություն է այն անձի կյանքով, որի նկատմամբ տածում ենք այս զգացմունքը: Այնտեղ, ուր բացակայում է ակտիվ շահագրգռությունը, չի կարող սեր լինել»,- ասում է ճանաչված հոգեբան Էրիխ Ֆրոմը: Այս ճշմարտությունը վառ կերպով անդրադարձված է Հովնանի մարգարեության մեջ:

Աստված Հովնանին պատվիրեց գնալ Նինվե եւ քաղաքի բնակիչներին կոչ անել՝ հրաժարվելու իրենց անօրինություններից, «քանի որ նրա (Նինվեի) չարության համբավը հասավ ինձ» (Հովն. Ա 2): Հովնանը չանսաց Աստծո խոսքին եւ խույս տվեց Աստծուց իրեն վստահված առաքելությունից, քանի որ նրա սրտում ավելի շատ արդարադատության գաղափարն էր իշխում, քան սիրո: Նա վախենում էր, որ նինվեացիները կզղջան, ետ կդառնան իրենց չար ճանապարհից, եւ Աստված կների նրանց: Հետագայում, երբ փորձեց փախչել, հայտնվեց կետի փորում, որը խորհրդանշում է նրա մեկուսացած ու անհաղորդ վիճակը, ուր ինքը հայտնվեց մարդասիրության պակասի հետեւանքով: Բայց Աստված փրկեց նրան, եւ Հովնանը վերադարձավ Նինվե ու քարոզեց այն ամենը, ինչ Տերը պատվիրել էր նրան: Արդյունքում կատարվեց այն, ինչից խուսափում էր մարգարեն. նինվեացիները զղջացին իրենց գործած մեղքերի համար, ապաշխարեցին, ուղղեցին իրենց ընթացքը, եւ Աստված չկործանեց նրանց քաղաքը:

«Հովնանը մեծապես տխրեց ու ջղայնացավ»,- ասում է Սուրբ գիրքը: Նա ցանկանում էր, որ արդարությունը հաղթանակի եւ ոչ թե գթասրտությունը: Վերջապես նա իր հանգիստը գտավ դդմենու հովանու տակ, որն Աստծո կամքով էր մի գիշերվա ընթացքում աճել ու մեծացել: Բայց երբ նույն Աստծո կամքով բույսը չորացավ, Հովնանը տրտմեց եւ գանգատվեց: Իսկ Աստված այսպես պատասխանեց. «Դու ափսոսացիր դդմենուն, որի համար ոչ մի ջանք չթափեցիր, չսնեցիր այն. նա գիշերը բուսնեց եւ մյուս գիշերը կորավ: Իսկ Ես չխնայե՞մ Նինվե մեծ քաղաքին, որտեղ ապրում է ավելի քան հարյուր քսան հազար մարդ, որոնք իրենց լավն ու վատը չիմացան...» (Հովն. Դ 10-11):

Աստծո պատասխանը ցույց է տալիս, որ սիրո էության մեջ սրտացավություն, ուրիշի գոյության մասին հետաքրքրություն կա, որը պասիվ չէ: Այս առումով կարելի է ասել, որ սերն ու ջանադրությունն անբաժան են: Սերը մեծագույն առաքինությունն է, որն իրենով իմաստավորում է այլ առաքինություններ: Այսպիսով, անգամ արդարությունն առանց սիրո մարդուն դարձնում է անողոք, ինչպես Հովնանին: Ճշմարտությունն էլ առանց սիրո նույն քննամոլությունն է, իսկ մարդկային այնպիսի կարեւոր որակներից, ինչպիսիք են բարեկրթությունը, սիրալիրությունը, առանց սիրո վերածվում են կեղծավորության: Խելամիտ մարդն առանց սիրո խորամանկ է, իշխանավորը՝ բռնակալ, հարուստը՝ ագահ, եւ անգամ հավատացյալը՝ մոլեռանդ:

Պողոս առաքյալը, ի տարբերություն Հովնան մարգարեի, Թեսաղոնիկեի եկեղեցու հավատացյալների նկատմամբ կատարյալ սիրո դրսեւորում է ցուցաբերում նրանց ուղղված իր նամակում. «ի՞նչ գոհություն կարող ենք մատուցել Աստծուն ձեզ համար այն ամբողջ ուրախության պատճառով, որով ուրախանում ենք ձեզ համար Աստծո առաջ. գիշեր-ցերեկ թախանձագին աղոթում

ենք, որ տեսնենք ձեր երեսը եւ լիացնենք ձեր հավատի պակասը: Եվ ինքն Աստված եւ մեր Հայրը, եւ մեր Տեր Հիսուս Քրիստոս թող ուղղի մեր ճանապարհները դեպի ձեզ, եւ ինքը՝ Տերը, թող աճեցնի եւ առատացնի ձեր սերը, որ ունեք միմյանց հանդեպ եւ բոլորի հանդեպ, ինչպես եւ մենք՝ ձեր հանդեպ» (Ա Թես. Գ 9-12):

Սերն այն ներքին ուղղվածությունն ու դիրքորոշումն է, որը կարգավորում է ոչ միայն անհատի, այլեւ ողջ մարդկության հետ հարաբերությունները: Անգամ այնպիսի նիհիլիստ, ինչպիսին Նիցշեն է, սիրո ուղղվածության, սիրո «առարկայի»մասին այսպես է արտահայտվում. «Մեկի հանդեպ սերը բարբարոսություն է, որովհետեւ այն իրագործվում է մյուս բոլորի հաշվին, նաեւ Աստծո հանդեպ սերը»: Է. Ֆրոմն էլ հաստատում է այս միտքը. «Եթե մարդը միայն մեկին է սիրում եւ անտարբեր է մյուս մերձավորների նկատմամբ, նրա սերը սեր չէ, այլ սիմբիոտիկ միություն»: Շատերն են համոզված, որ սիրո գոյությունը կախված է սիրո «առարկայից» եւ ոչ թե սիրելու սեփական կարողությունից: Անգամ համոզվածություն կա, որ բացի «սիրած» մարդուց ոչ ոքի չսիրելն իրենց սիրո ուժի արտահայտությունն է: Եթե մենք սիրում ենք մեկին, սիրում ենք բոլոր մարդկանց եւ ուղղակի ողջ աշխարհը: Եթե մի մարդու կարող ենք ասել, թե սիրում ենք նրան, պետք է, որ ի վիճակի լինենք նաեւ ասելու, որ նրանում ամեն ինչն ենք սիրում, ինչպես նաեւ՝ «քո շնորհիվ ես ողջ աշխարհն եմ սիրում, քեզանում ես ինքս ինձ եմ սիրում»:

Է. Ֆրոմը սիրո տարբերակումների մեջ եղբայրական սերն է հիմնական համարում, որը հիմք է հանդիսանում սիրո մյուս բոլոր տեսակների համար: «Սեր» բառի մեջ նա պատասխանատվություն, հոգատարություն, դիմացինի էության հանգամանալից իմացություն, նրա կյանքի ապահովության եւ երկարակեցության ցանկություն է ենթադրում: Աստվածաշնչում հենց այսպիսի սիրո մասին է խոսքը, երբ ասվում է. «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մատթ. ԻԲ 39; Մարկ. ԺԲ 31; Ղուկ. Ժ 27):

Եղբայրական սերը սեր է ողջ մարդկության հանդեպ, որը բնորոշվում է նախապատվության բացակայությամբ: Եղբայրական սիրո մեջ առկա է բոլոր մարդկանց հետ միասնության զգացումը: Եղբայրական սերը հիմնվում է այն գաղափարի վրա, որ մենք մի ամբողջի մասնիկներն ենք, եւ որ շնորհների, կրթության, գիտելիքների եւ մյուս հնարավոր տարբերությունները հաշվի չեն առնվում. այստեղ կարեւորը մարդկային էության նույնությունն է: Իսկ որպեսզի կարողանանք զգալ մեր էությունների նույնությունը, անհրաժեշտ է խորքերը՝ մակերեսից դեպի կենտրոն թափանցել: Եթե որեւէ մեկին մակերեսայնորեն ճանաչենք, միայն տարբերությունները տեսած կլինենք, որոնք բաժանում են մեզ: Իսկ եթե թափանցենք նրա էության խորքերը, կճանաչենք մեր նույնությունը, մեր եղբայրության իմաստը: Սա կենտրոնների, ոչ թե եզրերի կապ կլինի:

Եղբայրական սերը սեր է հավասարների միջեւ, թեեւ հավասարները միշտ չէ, որ «հավասար» են: Որպես մարդիկ, մենք բոլորս էլ օգնության կարիք ունենք. այսօր՝ մեկս, վաղը՝ մյուսը:

Անօգնականի, աղքատի ու օտարի նկատմամբ սերը եղբայրական սիրո սկիզբն է: Արյունակցին սիրելն արժանիք չէ. կենդանիներն էլ են իրենց ձագերին սիրում ու հոգ տանում նրանց համար: Թույլ մարդը սիրում է հովանավորին, քանի որ նրանից է կախված իր կյանքն ու բարեկեցությունը, երեխան սիրում է իր ծնողներին, որովհետեւ նրանց կարիքն ունի: Ճշմարիտ սերն սկսում է արտահայտվել միայն նրանց նկատմամբ, որոնց չենք կարող մեր նպատակներին հասնելու համար օգտագործել: Նկատելի է, որ Հին ուխտում մարդկային սիրո առարկան աղքատը, օտարականը, որբն ու այրին են: Բ Օրինացում Մովսեսը ժողովրդին ի լուր հայտնում է այն օրենքները, որոնցով նրանք պիտի առաջնորդվեին Ավետյաց երկրում, որն Աստծուց ժառանգություն էին ստացել: Այսպես, իսրայելացիների համար օրենք էր. «Եկվորի, որբի եւ այրու իրավունքները մի՛ ոտնահարիր, այրու զգեստները գրավ մի՛ վերցրու, որովհետեւ դու էլ ստրուկ էիր եգիպտացիների երկրում, եւ քո Տեր Աստվածը փրկեց քեզ այնտեղից» (Բ Օրինաց ԻԴ 17-18): «Երբ քո արտը հնձելուց հետո խուրձ մոռանաս արտում, մի՛ վերադարձիր այն վերցնելու համար. դա թող պատկանի աղքատին, եկվորին, այրուն ու որբին, որպեսզի քո Տեր Աստվածը քեզ օրհնի բոլոր այն գործերում, որ ձեռնարկում ես» (Բ Օրինաց ԻԴ 19): Օրենքի համաձայն, իսրայելացիներն արտերի սահմանները չէին հնձում, այգիների բերքն ամբողջությամբ չէին հավաքում, որպեսզի այրին, որբը, իրենց երկիր եկած

օտարականը զրկված չլինեին կենսական անհրաժեշտությունից: Անգամ անեծք էր դրվում հասարակության այս կարգավիճակի մարդկանց իրավունքները խախտողի վրա. «Անիծյալ լինի այն մարդը, որը կոտնահարի եկվորի, որբի եւ այրու իրավունքները: Եվ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպես թող լինի» (Բ Օրինաց ԻԷ 17): Անօգնական մարդու նկատմամբ կարեկցանք ունեցողն սկսում է իր եղբորն էլ սիրել: Եթե կարեկցում ենք, նշանակում է՝ արդեն դիմացինի մասին որեւէ բան գիտենք ու նույնացել ենք նրա հետ: Մովսեսն իսրայելացիներին սրա մասին էր ասում. «Դուք գիտեք օտարի հոգին, որովհետեւ դուք էլ օտարական էիք Եգիպտոսում... այդ պատճառով էլ սիրեք օտարականին» (Հմմտ. Ելք ԻԲ 21):

Սիրո հիմնախնդրի քննարկումն անբաժան է հասարակական միջավայրից: Եթե սերը ներքին դիրքորոշում է ամեն ինչի նկատմամբ, եթե այն բնավորության գիծ է, ապա անպայմանորեն պիտի ներկա լինի ոչ միայն սեփական ընտանիքի, ընկերների ու բարեկամների հետ հարաբերություններում, այլեւ բոլոր նրանց, ովքեր այս կամ այն կերպ առնչվում են մեզ հետ առօրյա կյանքում: Սերը չի բաժանվում յուրայինների եւ օտարների, անգամ, ընդհակառակը, առաջինով է պայմանավորված երկրորդի գոյությունը: Սակայն գերիշխող կողմնորոշիչը լավագույն, այն էլ եզակի դեպքերում, ազնվության սկզբունքն է: Իսկ արդար լինել՝ նշանակում է չխաբել, չկեղծել, չխորամանկել գործնականի, ինչպես նաեւ զգացմունքների մեջ: Զուտ գործնական հարաբերություն է ստացվում միայն արդարությամբ առաջնորդվելը: Դեռ ավելին, արդարադատությունը դաժանության ու խստասրտության է հանգեցնում, եթե գթասրտությամբ ու սիրով չի լուսավորված, ինչպես վերը տեսանք Հովնան մարգարեի օրինակով:

Մարդն իր գոյության ու զարգացման ողջ ընթացքում, գործունեության բոլոր բնագավառներում, ռացիոնալ լուծումների ու հարմարավետության ձգտելով, մի հիմնական միտում է դրսեւորել, որն արտացոլվել է նաեւ հոգեւորի մեջ: Մարդուն հատուկ է ամեն ինչ իրեն հարմարեցնելը եւ ամեն ինչին հարմարվելը, եթե հարմարեցնել չի ստացվում: Հարմարեցնելու, հեշտացնելու միտումն է, որ հավանական է դարձնում «Ոսկե օրենքն» ազնիվ լինելու էթիկայի հետ նույնացնելու, այլ կերպ մեկնաբանելու կամ շփոթելու հնարավորությունը: Օրինակ՝ «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես եւ դուք արեք նրանց» պատվիրանը կարելի է ներկայացնել «Ուրիշների հետ հարաբերություններում ազնիվ եղիր» իմաստով, ինչը գործնական կանոն է նաեւ շուկայական հարաբերություններում: Սակայն ի սկզբանե այն ունեցել է «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» ձեւակերպումը: Եղբայրական սիրո սկզբունքն իրականում տարբերվում է ազնվության էթիկայից: Այն պահանջում է սիրել մերձավորին, այսինքն՝ պատասխանատվության եւ միության զգացողություն ունենալ նրա հանդեպ, այն դեպքում, որ ազնիվ լինելու էթիկան ոչ միայն այդ պահանջները չի ներկայացնում, այլեւ տարածություն է պահպանում փոխհարաբերություններում եւ մարդկանց մեկուսացնում է իրենց սեփական սահմանների մեջ: Ազնվության էթիկան պարտավորեցնում է մերձավորին հարգելու, բայց ոչ՝ սիրելու: Այլ կերպ սա կարելի է որակել որպես էգոիզմ, որը նրբացել է ազնվության էթիկական սկզբունքով:

Եթե մերձավորին սեփական անձի պես սիրելու պատվիրանն սկզբունք դառնա մարդկանց հետ մեր հարաբերություններում, լիովին կվերափոխի մեր կյանքը: Սուրբ Ծնունդյան եւ Աստվածհայտնության տոներն իրենք իրենցով անդրադարձ են ՍԻՐՈ սկզբունքին՝ մարդկային կյանքի բոլոր հարթություններում, եթե այսօր մեր Հայրենիքում, ազգային մեր կյանքում ամեն ինչ չէ, որ հարթ է, ամեն ինչ չէ, որ բարվոք է, ուրեմն մեր սերն է պակասել առ Տերը, առ Եկեղեցին ու Հայրենիքը, ուրեմն մենք ուշանում ենք մեկս մյուսի հանդեպ սիրո մեջ: Սիրո պակասից են ծնունդ առնում անվստահությունն ու անհանդուրժողականությունը, հակառակությունն ու թշնամանքը, աղքատությունը, օտարացումը միմյանցից, փախուստը Հայրենիքից:

Ուրեմն, թող մեզ բոլորիս միավորի, մեր սրտերին նոր կյանք ու կենդանություն պարգեւի Մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ միմյանց այն սիրով սիրելու կոչը, որով Նա սիրեց մեզ բոլորիս եւ հավատարիմ է, մինչեւ վերջ է հավատարիմ Իր սիրո մեջ: